ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ*

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան հակամարտություն, միջազգային իրավունք, իրավական փաստարկներ, ինքնորոշման իրավունք, «Մադրիդյան սկզբունքներ», քաղաքական շարժառիթներ, հակամարտության կերպար, ԵԱՀԿ Մինսկի խումբ, միջազգային հանրություն:

Քաղաքական ու իրավական փաստարկների ներքին կապը:

Նախքան Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում քաղաքական և իրավական փաստարկների ներքին կապերի քննարկումը՝ անդրադառնանք քաղաքականության և իրավունքի փոխհարաբերություններին ընդհանրապես: Ինչպես հայտնի է, մարդկանց վարքագիծն ու փոխհարաբերությունները, այդ թվում՝ քաղաքական կյանքին տարբեր ուղիներով ու ձևերով նրանց մասնակցությունը, կարգավորվում են վարքի որոշակի կանոններով: Իրավական նորմերի կարգավորիչ գործառույթը դրսևորվում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ դրանց հիմքով ընդունված որոշումների միջոցով: Քաղաքական հարաբերությունների իրավական կարգավորման նորմերը ամրագրվում են համապատասխան իրավական ակտերում՝ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում, որոնք ընդունվում են իշխանության համակարգի տարբեր ինստիտուտների կողմից՝ դրանց կարգավիճակի և լիազորությունների շրջանակներում:

Երկրորդ դիտարկումն առնչվում է միջազգային քաղաքականության իրավական հիմքերին ու սկզբունքներին: Հայտնի է, որ արդի ժամանակաշրջանում միջազգային իրավունքի գերակայության ընդունումը դարձել է միջպետական հարաբերությունների կարգավորման հիմնական սկզբունքներից մեկը: Միջազգային իրավունքը կարգավորում է միջազգային քաղաքականության սուբյեկտների գործունեությունը և փոխհարաբերությունները: Արդի միջազգային իրավունքն ընդհանուր առմամբ միջազգային հարաբերությունները կարգավորող նորմերի համակարգ է, որն ունի համընդհանուր նշանակություն: Այդ սկզբունքները և նորմերը հավասարապես վերաբերում են բոլոր երկրներին ու պետություններին, միջպետական և ոչ պետական բոլոր հաստատություններին ու կազմակերպություններին, որոնք այս կամ այն ձևով հանդես են գալիս միջազգային քաղաքականության սուբյեկտների դերում:

Միջազգային քաղաքականության և միջազգային իրավունքի օրգանական կապն ամենից առաջ դրսևորվում է միջազգային քաղաքականության սկզբունքների մշակման, ընդունման և կիրարկման գործընթացներում: Միջազգային քաղաքականության սկզբունքները և միջազգային իրավունքի սկզբունքները սերտորեն կապված են միմյանց հետ, բայց նաև տարբերվում են իրենց բնույթով և գործառույթներով: Միջազգային քաղաքականության սկզբունքները պետությունների, միջպետական և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեության այն ելակետային հիմքերն են, որոնք ամրագրված են միջազգային իրավունքի նորմերում:

* Հոդվածն ընդունվել է 21.01.2016:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնը:

Միջազգային իրավունքը միջազգային հարաբերությունների իրավական կարգավորման նորմերի համակարգ է, որը ստեղծվում է միջազգային քաղաքականության սուբյեկտների՝ մասնավորապես պետությունների կողմից համատեղ կայացրած համաձայնությունների ու պայմանավորվածությունների միջոցով: Միջազգային իրավունքի հիմնական աղբյուրը պետությունների միջև փոխհամաձայնությամբ կնքված պայմանագրերն են: Միջազգային քաղաքականության փորձից ելնելով՝ մշակվել և համընդհանուր ճանաչում են գտել պետությունների փոխհարաբերությունները կարգավորող այնպիսի ձևեր, ինչպիսիք են պայմանագիրը, համաձայնագիրը, հայտարարությունը, հրովարտակը, կոնվենցիան, պակտը, դաշնագիրը, կանոնադրությունը, ծրագիրը և այլն: Միջազգային պայմանագրերի կնքման, ստորագրման, վավերացման և կիրարկման մեխանիզմը սահմանվում է միջազգային իրավունքի նորմերով և ազգային՝ ներպետական օրենքներով:

Սակայն քաղաքականության և իրավունքի փոխհարաբերությունները դրանցով չեն սահմանափակվում: Վերոնշյալը նրանց փոխկապվածության արտաքին դրսևորումն է միայն, իսկ հակամարտությունների կարգավորմանն ուղղված գործընթացում այդ կապերն առավելապես հանդես են գալիս անուղղակի ձևերով: Հիմնախնդիրը, որի նկատմամբ պետությունն անտարբեր չէ, սովորաբար քաղաքականացվում և մեկնաբանվում է սեփական շահերից ելնելով, բայց իրավական ձևակերպման քողի ներքո: Թերևս դրանցից ամենատարածվածը քաղաքական գործիչների կողմից իրավական սկզբունքների տարաբնույթ մեկնաբանություններն ու ձևակերպումներն են: Առանձին դեպքերում, ինչպես միջազգային հարաբերություններում տեղի ունեցող իրադարձություններն են փաստում, որոշ պետություններ երկակի ստանդարտներ են կիրառում միջազգային իրավունքի նույն սկզբունքի մեկնաբանման ընթացում: Իրավիճակն այդպիսին է մասնավորապես էթնոքաղաքական հակամարտություններին առնչվող գործընթացներում[1]: Օրինակ՝ ազգերի իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի կիրառումը, չնայած միջազգային իրավունքում այդ նորմի բարձր իրավական կարգավիճակին, շատ հաճախ ուղեկցվում է չափազանց լուրջ դժվարություններով, քանզի ուղղակիորեն շոշափում է մի շարք պետությունների քաղաքական շահերը: Հատկանշական է, որ ժամանակին թեև Խորհրդային Միությունն ակտիվորեն նպաստում էր աֆրիկյան երկրների անկախացման գործընթացին, բայց միաժամանակ դաժանորեն ճնշում էր բալթյան և այսրկովկասյան հանրապետություններում անկախության գաղափարի արծարծման որևէ դրսևորում: Երկակի մոտեցումների կիրառման սկզբունքը տիրապետող է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Եվրոպայի պարագայում:

Գերտերությունների կողմից միջազգային իրավական սկզբունքների տարաբնույթ մեկնաբանությունները դրսևորվել են նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերում: Ինչպես հայտնի է, հիմնախնդրի կարգավորման գործընթացում միջնորդները կողմերին կոչ են անում հրաժարվել պատմական փաստարկներից և հիմնախնդրի կարգավորման բանալին փնտրել իրավունքի, մասնավորապես՝ միջազգային իրավունքի նորմերում: Իրոք, ժամանակակից աշխարհում հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորման գլխավոր սկզբունքն իրավունքն է: Ինչպես պրոֆեսոր Ա. Մանասյանն է նշում. «Իրավունքը մշակութային այն ունիվերսալ կաղապարներից մեկն է, որում իր պատմական կոնկրետության մեջ կերպավորվում է հասարակական զարգացման ընթացքը: Այն բանից հետո, ինչ նա կայացել է որպես հասարակական հարաբերությունների կարգավորման հաստատություն, ազատության, հավասարության, արդարության հասարակական-քաղաքական իդեալները այլևս չեն գիտակցվել նրանից դուրս կամ անկախ: Դրանք հավասարապես

գիտակցվել են որպես և՛ քաղաքականության, և՛ իրավունքի «իրավաստությանը պատկանող« երևույթներ: ... Առավել կարևոր է այն փաստի գիտակցումը, որ քաղաքական զարգացումները (գլոբալ, թե լոկալ) «իրենք իրենց գտնում« և ինքնարտահայտվում են իրավունքի մեջ և իրավունքի լեզվով: Եվ հենց այդ անխզելի կապի մեջ է քաղաքականությունը գիտակցում և հաստատում իր ինքնությունը որպես գլոբալ քաղաքակրթության երևույթ« [2]: 19-րդ դարի գերմանացի նշանավոր իրավագետ Ռուդոլֆ ֆոն Իերինգն իրավունքը բնորոշել է որպես խելամիտ ըմբռնված քաղաքականություն, որն իրականացնում է պետական իշխանությունը: Նրա կարծիքով՝ «իրավունքը ծառայում է քաղաքականությանն այնպես, ինչպես կողմնացույցն է ծառայում նավավարին»[3]:

Ներկայումս, առանց իրավունքի, պարզապես դժվար է պատկերացնել այնպիսի կարևոր ձեռքբերումներ, ինչպիսիք են՝ իրավական պետությունը, օրենքի գերակայությունը, արդի միջազգային հարաբերությունները և այլն: Նորանկախ պետությունների միջազգային ճանաչման համար ևս կարևոր նշանակություն ունեն ինքնորոշվող երկրի կողմից ընդունված իրավական ընթացակարգերը: Յանկացած հիմնախնդիր վերջնականորեն կարգավորելու համար նրան անհրաժեշտ է իրավական ձևակերպում տալ: Բոլոր դեպքերում չկա որևէ էթնոքաղաքական կոնֆլիկտ, որտեղ հակամարտող կողմերը միջազգային հանրությանը իրավական «հագուստով« չներկայացնեն իրենց դիրքորոշումը: Քաղաքագետ Գ. Թավադովի դիպուկ բնորոշմամբ՝ ակնհայտ է նաև մեկ այլ բան. «էթնիկական հակամարտությունը բոլոր դեպքերում քաղաքական է, որովհետև մշակութալեզվական, սոցիալ-տնտեսական և մյուս ազգային նպատակներին հասնելու համար որպես կանոն օգտագործվում են քաղաքական ուղիներն ու մեթոդները« [4]: Ընդհանրապես քաղաքականությունից դուրս հակամարտություն չի կարող գոյություն ունենալ, ինչը վկայում է, որ հակամարտությունների կարգավորման գործընթացում քաղաքականությունն ու իրավունքն իրար հետ կապված են բազմաթիվ՝ տեսանելի ու անտեսանելի թելերով:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ ՄԽ համանախագահները ևս, հիմնախնդրի մասին իրենց տեսակետները սովորաբար ձևակերպում են (կամ՝ աշխատում են ձևակերպել) իրավունքի լեզվով և իրենց առաջարկություններում խոսում են իրավունքի՝ մասնավորապես միջազգային իրավունքի անունից, աշխատելով չհակասել այդ սկզբունքներին: Այսինքն՝ առավելապես միջազգային իրավունքն է մեր օրերում տրամադրում հակամարտությունների կարգավորման լեզուն: Հասկանալի է, որ միջնորդները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող գործընթացը ևս ամեն կերպ փորձում են տեղավորել միջազգային իրավունքի նորմերի՝ ՄԱԿ-ի կանոնադրության [5], Հելսինկիի եզրափակիչ ակտի [6] և համանման այլ իրավական բնույթի հռչակագրերի ու սկզբունքների շրջանակներում՝ տարաբնույթ մեկնաբանությունների օգնությամբ աշխատելով բացահայտ հակասության մեջ չմտնել դրանց հետ: Ակնհայտ է նաև, որ հակամարտությունների կարգավորումը որպես կանոն վարպետորեն քաղաքականացվում է դրանց շուրջ ընթացող բանակցություններում, և իրավունքի՝ հաճախ անվիճելի թվացող սկզբունքների իրագործումը ընդհարվում է մի շարք արգելքների, փոխելով բուն հիմնախնդրի կերպարը: Պատճառը ոչ միայն հիմնախնդրի քաղաքականացումն ու նրա տարաբնույթ մեկնաբանություններն են, այլև այն, որ քաղաքականության «լեգիտիմ գոյության« անհրաժեշտ պայմանը իրավական հիմքի առկայությունն է [7]: Դա նշանակում է, որ քաղաքական գործիչները ձգտում են քաղաքական գործընթացների նկատմամբ իրենց դիրքորոշումները ձևակերպելու՝ հենվելով իրավական նորմերի վրա, կամ հղում կատարելով համապատասխան իրավական սկզբունքներին՝ նաև

դրանց լեգիտիմությունն ապահովելու համար: Միջնորդների կողմից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված բոլոր առաջարկությունները, սկսած Լիսաբոնյան գագաթնաժողովում (1996թ. դեկտեմբերի 3) քվեարկության դրված փաստաթղթից մինչև վերջին՝ կողմերին ներկայացված Մադրիդյան կոչված փաստաթուղթը, չնայած դրանց միջև գոյություն ունեցող ակնհայտ տարբերություններին, նույնպես ձևակերպված են միջազգային իրավունքի լեզվով: Մյուս կողմից՝ այս և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով ներկայացված այլ՝ «Փաթեթային», «Փուլային» և «Ընդհանուր պետություն» անվանումները ստացած տարբերակների դրույթները գերազանցապես ձևակերպված լինելով միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա, բավականին հեռու են հիմնախնդրին առնչվող օբյեկտիվ իրավական փաստերից ու փաստարկներից: Օրինակ՝ 2013թ. մարտի 10-11 Ֆոլկլենդյան կղզիներում բնակչության ինքնորոշման նպատակով անցկացված հանրաքվեի արդյունքները ողջունել է Մեծ Բիտանիայի ԱԳ նախարար Ուիլյամ Հեյգը, հայտարարելով, թե 21-րդ դարում նախևառաջ պետք է կարևորվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը [8]: Մեծ Բրիտանիայի կողմից բազմիցս է հայտարարվել, որ պատրաստ են ճանաչելու 2014թ. Շոտլանդիայում ինքնորոշման նպատակով կատարվելիք հանրաքվեի արդյունքները (և ճանաչել են), բայց ինչպես հայտնի է, նրանց կողմից Ղարաբաղյան հակամարտության դեպքում խնդիրն այլ հարթության մեջ է դիտարկվում՝ չնայած մեր դեպքում շատ ավելի զորեղ իրավական փաստարկների առկայությանը: Այսինքն՝ քաղաքական շարժառիթները «սիրում են թաքնվել« իրավունքի՝ հաճախ ակնհայտ թվացող սկզբունքների տարաբնույթ մեկնաբանությունների տակ՝ փակուղի տանելով հակամարտության կարգավորման գործընթացը: Դա նկատելի է նաև մեր դեպքում: Թե՛ միջնորդները, թե՛ հակամարտության կողմերը չեն խուսափում միջազգային իրավունքին կատարվող հղումներից: Տվյալ պարագայում հայկական կողմերի խնդիրը միջազգային իրավունքի՝ հակամարտության կարգավորման ներբերվող սկզբունքները կեղծ մեկնաբանություններից ազատելը, դրանք իրենց իրական բովանդակությամբ ներկայացնելն ու կիրառելը պիտի լինի:

Ղարաբաղյան հակամարտության իրավական փաստարկների նվազագույն փաթեթը:

Եթե միջնորդների սեղանին դրվի Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն առնչվող իրավական փաստարկների նվազագույն փաթեթը, ապա այն կունենա հետևյալ բովանդակությունը.

- Ադրբեջանական անունով պետությունն առաջին անգամ Արևելյան Անդրկովկասում հայտնվել է 1918 թվականին, երբ Օսմանյան կայսրության կողմից աշխարհաքաղաքական նկատառումներով ստեղծվել է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) [9]: Այդ տարածքների վրա ստեղծված պետությունը հռչակվում էր առանց որևէ իրավական հիմքի՝ Թուրքական զորքերի օգնությամբ [10]:

- Առաջին աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային կառույցը՝ Ազգերի Լիգան, մերժել է այդ կառույցին ԱԴՀ անդամակցության հայտը, այն հիմնավորմամբ, որ նորաստեղծ պետությունը հավակնում է այնպիսի տարածքների, որոնց նկատմամբ նա վերահսկողություն չուներ [11]: Իրավական լեզվով դա նշանակում է, որ Ազգերի Լիգան բավարար հիմքեր չէր գտել 1918թ. հռչակված ԱԴՀ-ն՝ որպես ինքնիշխան պետություն ճանաչելու համար: Խնդիրն այն է, որ ինքնիշխան պետության կարևորագույն և հիմնական հատկանիշներից մեկը, ինչպես նշում է պետական ինքնիշխանության հայեցակարգի հիմնադիր Ժ. Բոդենը, բացի որոշակի բնակչության կազմից ու տարած-

քից, իր կողմից հավակնող տարածքի վրա միանձնյա իշխանության իրականացումն է, որի իրավունքը ստանում է տվյալ պետության ժողովրդի կողմից [12]: 1918-1920 թվականներին գոյատևած ադրբեջանական պետությունը ակնհայտորեն չէր համապատասխանում ինքնիշխան պետություն համարվելու այդ պայմաններին:

- Ի տարբերություն ԱԴՀ-ի, որը ղեկավարում էին թուրք փաշաներն ու Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները [13]՝ արցախահայությունը 1918-1920 թվականներին իշխանությունն իրագործում էր երկրամասի ազգաբնակչության կողմից ընտրված լիազոր ներկայացուցիչների համագումարի ու նրա ձևավորած ներկայացուցչական մարմնի՝ Ազգային Խորհուրդի միջոցով:

- 1920 թվականի ապրիլին ԱԴՀ-ի և մայիսին Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումով չէր կանխորոշվել վերջինիս այս կամ այն կողմին պատկանելության հարցը: Խորհրդային Ռուսաստանը Ազգերի Լիգայի որոշմանը համահունչ, 1920թ. օգոստոսի 10-ին Հայաստանի դեռևս ոչ խորհրդային հանրապետության հետ ստորագրեց համաձայնագիր, որտեղ նշվում է, որ խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների գրավումը չի կանխորոշում դրանց՝ ՀՀ-ին կամ Խորհրդային Ադրբեջանին պատկանելիության հարցը [14]:

- 1920 թվականի նոյեմբերի 30-ին Բաքուն հրաժարվել է Խորհրդային Հայաստանի նկատմամբ տարածքային իր հավակնություններից [15], իսկ երկու օր հետո՝ դեկտեմբերի 2-ին, ճանաչել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը [16]: Համարելով Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ վեճն ավարտված և հիմնվելով տեղի բնակչության ազատ կամարտահայտության վրա՝ 1921թ. հունիսի 12-ին Խորհրդային Հայաստանի կառավարությունը երկրամասը հռչակել է իր անքակտելի մասը [17]:

- 1921թ. հուլիսի 5-ին Ստալինի թելադրանքով բեկանվել է ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի հուլիսի 4-ի առանց ընթացակարգային խախտումների ընդունած որոշումը և ընդունվել Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի մեջ մտցնելու որոշում [18]: Կովկասյան բյուրոն տարածքային խնդիրներ լուծելու իրավասություն չի ունեցել: Սակայն, այդ որոշմամբ էլ Խորհրդային Ադրբեջանը իրեն հանձնված տարածքների նկատմամբ միանձնյա իշխանության իրականացման իրավունք չի ստացել, քանի որ նրա ինքնիշխանությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սահմանափակվել է այդ նույն որոշման 2-րդ կետով, որով Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի թեկնածուի հարցը պետք է համաձայնեցվեր Հայաստանի ԿԿ-ի հետ:

Կովբյուրոյի ակտը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթաց է բերում նաև երկու կարևորագույն իրավական փաստարկ.

1. Լեռնային Ղարաբաղը մինչ այդ չի եղել ադրբեջանական պետության կազմում:

2. 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ Մոսկվան և Բաքուն ճանաչել են Լեռնային Ղարաբաղի ժողովրդի խորհրդային տիպի պետականություն ունենալու իրավունքը:

- 1923թ. հուլիսի 7-ի դեկրետով ինքնավար մարզը ստեղծվել է ոչ թե Լեռնային Ղարաբաղում (խոսքը ողջ Լեռնային Ղարաբաղի մասին է), ինչպես արձանագրված էր 1921թ. Կովբյուրոյի որոշման մեջ, այլ ի խախտումն այդ որոշման՝ Լեռնային Ղարաբաղի մի մասում [19]:

- «Ադրբեջանցիների» որպես ազգության անվանումն առաջին անգամ գրանցում է ստացել միայն 1936թ.: Մինչ այդ նրանց բնութագրման համար կիրառվում էին «կովկասյան թուրքեր«, «մահմեդականներ» «կովկասյան թաթարներ» և այլ էթնոնիմներ: Ադրբեջանցի պատմաբան Ա. Ալեքպերովը նույնպես վկայում է, որ «ադրբեջանցի» էթնոնիմը բնակչության շրջանում լայն կիրառություն է գտել միայն 1936 թվականից [20]:

Բացի դրանից, 1920 թվականին ԱդրԽՍՀ-ն չի հիմնվել որպես կովկասյան թաթարների կամ մուսուլմանների հանրապետություն: Այն հիմնվել է որպես տիտղոսակիր ազգ չունեցող (արտազգային, ինտերնացիոնալ) խորհրդային հանրապետություն:

- Ղարաբաղյան հակամարտությունը նոր փուլ մտավ 1980-ականներին, երբ 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի բարձրագույն ներկայացուցչական մարմինը հիմնախնդրի խաղաղ կարգավորման նպատակով և մարզի բնակչության կամքն արտահայտելով, խնդրեց ԱդրԽՍՀ ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին՝ ընդառաջել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ փոխանցելու հարցը [21]: Ժողովրդի կամքի արտահայտությունը ժամանակակից աշխարհում իրավական պետություն ստեղծելու կարևորագույն սկզբունքներից մեկն է՝ ամրագրված միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերում:

- 1989թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը ընդունել է ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձևի հաստատման և Ա. Վոլսկու գլխավորությամբ Հատուկ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) կազմավորման մասին հրամանագիր [22]: Հատուկ կառավարման կարգավիճակը ԽՍՀՄ գոյության տարիներին կենտրոնին ուղիղ ենթակայությամբ ԼՂԻՄ-ի վերջին իրավական կարգավիճակն էր: Դրանից հետո ԼՂԻՄ-ը և նրա իրավահաջորդ ԼՂՀ-ն փաստացիորեն այլևս չեն եղել ԱդրԽՍՀ-ի և նրա իրավահաջորդությունից հրաժարված Ադրբեջանի Հանրապետության վարչական ենթակայության ներքո:

- Մերօրյա ԱՀ-ը 1991թ. օգոստոսի 30-ի «Պետական անկախության վերականգնման մասին» հռչակագրով [23] և 1991թ. հոկտեմբերի 18-ի «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին սահմանադրական ակտով» [24] հրաժարվել է ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից և վերականգնել թուրքական ինտերվենցիայի արդյունքում հիմնված և Ազգերի Լիգայի կողմից չճանաչված մի պետականություն, որի սահմաններում Լեռնային Ղարաբաղը չի ընդգրկվել: Սակայն, ԱՀ-ն ակնհայտորեն խախտել է միջազգային իրավունքը, երբ 1992թ. միջազգային հանրությանն է ներկայացել այն պետության (ԱդրԽՍՀ) սահմաններով, որի իրավահաջորդությունից հրաժարվել է:

- 1990թ. ապրիլի 3-ին ընդունվեց ԽՍՀՄ օրենքը «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին», որը միութենական հանրապետության կազմից դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումներին իրավունք էր վերապահում ինքնուրույն որոշելու իրենց պետահիրավական կարգավիճակի հարցերը [25]: ԼՂՀ բնակչությունը ինքնորոշման իրավունքից օգտվել և իր կամքն արտահայտել է 1991թ. դեկտեմբերի 10-ին, իսկ այնուհետև՝ 2006թ. նույն օրը քվեարկությամբ իրականացված կամարտահայտման և բազմաթիվ անգամներ տեղի ունեցած նախագահական ու խորհրդարանական ընտրությունների ընթացքում:

- ԼՂՀ-ն 1991թ. սեպտեմբերի 2-ին իր անկախությունը հռչակեց և դեկտեմբերի 10-ին հանրաքվե անցկացրեց ԱՀ-ին և՛ դեֆակտո, և՛ դեյուրե չպատկանող տարածքներում: Այնուհետև ընդունվեցին ինքնիշխան պետականության կայացման համար անհրաժեշտ իրավական բոլոր ակտերը՝ «Պետական անկախության մասին» հռչակագրի ընդունումը, անկախության մասին հանրաքվեն, խորհրդարանական ընտրությունները և գործադիր իշխանությունների ձևավորումը, որոնք կատարվեցին մինչև ԱՀ-ի միջազգային ճանաչումը (վերջինս ՄԱԿ է ընդունվել 1992թ. փետրվար-մարտ ամիսների ընթացքում):

- ԼՂՀ հռչակումը ԱՀ-ին չպատկանող տարածքներում մի իրավական փաստարկ է, որն իր բնույթով տարբեր է ԽՍՀՄ օրենսդրության տրամադրած 1990թ. ապրիլի 3-ի օրենքից: Այսինքն՝ ԼՂՀ-ն չի կայացել ԱՀ-ից անջատվելու ճանապարհով, քանի որ, հիմնախնդրի իրավական հիմքերի համաձայն, երբևէ չի պատկանել ԱՀ-ին: ԼՂՀ-ն դուրս չի եկել Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ նախատեսվող այն սահմաններից, որի շրջանակներում ԼՂԻՄ-ը պետք է հիմնվեր որպես խորհրդային տիպի պետականություն: Ընդհակառակը՝ այդ որոշման իրավական հիմքերի տեսակետից գրավյալ տարածքներ ունի Ադրբեջանի Հանրապետությունը:

Իրավական փաստարկների ձևակերպումները «Մադրիդյան սկզբունքներում»

Հիմնախնդրի նշված իրավական փաստարկները անտեսելը բնականաբար ծեռնտու է ադրբեջանական կողմին: Սակայն պարզվում է, որ այդ փաստարկների անտեսումը խուսանավելու լայն քաղաքական դաշտ է ստեղծում նաև միջնորդների համար, հնարավորություն տալիս անհրաժեշտ զիջումներ կորզել կողմերի հետ բանակցություններում: Արդյունքում՝ նրանք շարունակում են կատարել հակամարտության կարգավորման այնպիսի առաջարկներ, որոնք ակնհայտորեն հայտնի իրավական փաստարկներից չեն բխում: Բայց զարմանալիորեն դրանք բոլորն էլ ձևակերպված են իրավունքի լեզվով:

Թեկուզ վերցնենք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ մշակված ու նախքան նրա ծախողումը հանրությանը ներկայացված (փաստաթուղթը պաշտոնապես և ամբողջականորեն չի հրապարակվել) և այսօր էլ հակամարտող կողմերի ու միջնորդների սեղանին գտնվող փաստաթուղթը, որը հայտնի է «Մադրիդյան սկզբունքներ» անունով [26]:

«Մադրիդյան սկզբունքների» հանրությանը ներկայացված վեց կետերից երրորդն ու վեցերորդը վերաբերում են Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցքին և անվտանգության միջազգային երաշխիքներին: Իսկ ահա մյուս չորս սկզբունքները զուտ իրավական ձևակերպումներ են:

Փաստաթղթի առաջին կետով «ընդունվում է», որ իրավական տեսակետից Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքները պատկանում են Ադրբեջանի Հանրապետությանը, որոնք պետք է վերադարձվեն իրենց տերերին[27]:Բայց ինչպես վերն արդեն նշվել է, հիմնախնդրի իրավական փաստաթղթերի տեսակետից գրավյալ տարածքներ ունի հենց ԱՀ-ն:

«Մադրիդյան սկզբունքների» երկրորդ կետը վերաբերում է Լեռնային Ղարաբաղին անցումային կարգավիճակ տրամադրելուն, նրա անվտանգությանն ու ինքնակառավարմանը: Ինքնակառավարումը նույնպես իրավական հասկացությունների բառապաշարից է: Բայց «մոռացվում է» միջազգային հանրությանը ներկայացնելու, որ ինքնակառավարման կարգավիճակ Լեռնային Ղարաբաղը վաղուց է ձեռք բերել:

Չորրորդ կետը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի սահմանմանը՝ իրավական պարտադիր հետևանքով՝ կամարտահայտության միջոցով: Իրավական փաստարկները նորից վկայում են, որ միջազգային իրավունքի նորմերին համահունչ կամարտահայտության բազմաթիվ դրսևորումներով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը վաղուց է իր կարգավիճակը որոշել: Այլ հարց է այդ կարգավիճակի միջազգային ճանաչումը:

«Մադրիդյան սկզբունքների» հինգերորդ կետը, որը «Բոլոր ներքին տեղահանվածներին և փախստականներին՝ իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու իրավունք» է տալիս, իրականում կարելի համարել որպես կարևոր իրավական դրույթ

հակամարտության հետևանքների վերացման առումով, իհարկե եթե դրանք իրականացվեն օբյեկտիվորեն: Բանն այն է, որ բոլոր փախստականներին և ներքին տեղահանվածներին իրենց նախկին բնակության վայր վերադարձի թույլտվությունը իրոք կարևոր նշանակություն ունի հիմնախնդրի հետևանքների արդարացի կարգավորման համար: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնախնդրով զբաղվող միջնորդները խոսելով փախստականների ու ներքին տեղահանվածների մասին հիմնականում նկատի են ունենում ադրբեջանական կողմի փախստականներին ու ներքին տեղահանվածներին, կասկածներ են առաջանում հինգերորդ կետի օբյեկտիվության և նրա իրականացման վերաբերյալ: Դրա մասին է վկայում այն փաստը, որ առ այսօր նրանք երբևիցե չեն հիշատակել նման կարգավիճակ ունեցող հայերի մասին: Միաժամանակ, միջնորդները բազմիցս նշել են, որ չորրորդ կետում նշված կամարտահայտության իրավունքը կարող է իրագործվել միայն Լեռնային Ղարաբաղ փախստականների և ներքին տեղահանված անձանց իրենց նախկին բնակության վայրեր վերադառնալուց հետո: Իսկ որ դրա տակ միջնորդները հասկանում են միայն ադրբեջանական փախստականներին ու ներքին տեղահանվածներին վկայում է նաև 2010թ. սեպտեմբերի 6-9-ը Բաքու, Ստեփանակերտ և Երևան ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից կատարած հայտարարությունը, որտեղ որևէ խոսք չկա Շահումյանի, Մարտակերտի և ԼՂՀ այլ շրջանների հայ փախստականների ու ներքին տեղահանվածների մասին [28]:

Այսպիսով, ինչպես բոլոր էթնոքաղաքական հակամարտություններում, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ևս, քաղաքական և իրավական փաստարկները փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Քաղաքական շարժառիթները, ինչպես նշվել է, «սիրում են թաքնվել» իրավունքի՝ հաճախ ակնհայտ թվացող սկզբունքների տարաբնույթ մեկնաբանությունների տակ՝ փակուղի տանելով հակամարտության կարգավորման գործընթացը: Դա նկատելի է նաև մեր դեպքում: Թե՛ միջնորդները, թե՛ հակամարտության կողմերը չեն խուսափում միջազգային իրավունքին կատարվող հղումներից: Տվյալ պարագայում հայկական կողմերի խնդիրը միջազգային իրավունքի՝ հակամարտության կարգավորման ներբերվող սկզբունքները կեղծ մեկնաբանություններից ազատելը, դրանք իրենց իրական բովանդակությամբ ներկայացնելն ու կիրառելը պիտի լինի: Ինչպես ցույց տվեցին ԵԽԽՎ հունվարյան նստաշրջանի Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող իրադարձությունները, որպես ՀՀ և ԼՂՀ անվտանգության հզոր գործոններ, իրավական փաստարկների իմացությունն անհրաժեշտ են հայության, միջազգային հանրության, վերպետական կառույցներում, գիտական ու քաղաքական շրջանակներում հիմնախնդրի իրական կերպարը ներկայացնելու, աջակցությունն ապահովվելու, ինչպես նաև ԱՀ-ի հակահայկական քարոզչությունը չեզոքացնելու և հակամարտության արդարացի ու միջազգային իրավունքի սկզբունքների վրա հիմնված կարգավորմանը հասնելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. էթնոքաղաքական հակամարտությունների մասին մանրամասն տես՝ Աբրահամյան Շ., Աբրահամյան Ա., էթնոքաղաքական հակամարտություններ (ծագման պատճառները, ռազմավարությունը, կարգավորման ուղիները), Ստեփ., 2011:
2. Մանասյան Ա., Ղարաբաղյան հակամարտությունը իրավական և քաղաքական փաստարկների դիտակետից, Դրօշակ, 2008, թիվ 9-10, էջ 18:
3. История политических и правовых учений, М., 2000, стр.526.

4. Тавадов Г., Этнология, М., 2002, стр. 308-309
5. Charter of the United Nations-http://www.un.org/aboutun/charter/index.html.
6. Conference on security and Co-operation in Europe. Final Act-http://www.osce.org/documents/cs/1975/08/4044_en.pdf
7. Թումանյան Վ., Քաղաքականության հիմքերը, Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ, Եր., 2006, էջ 146:
8. www.panorama.am/am/world/2013/03/13/argentina-president/
9. Իսլամի հանրագիտարանի երկրորդ հրատարակության մեջ (1960թ.) հեղինակները գրում են. «Թուրքական զորքերը Նուրի փաշայի գլխավորությամբ Բաքուն գրավեցին 1918թ. սեպտեմբերի 15-ին և նախկին շրջանը վերածնակերպեցին Ադրբեջան անվան տակ՝ դա բացատրելով Պարսկաստանի հյուսիսի Ադրբեջանի շրջանի թյուրքախոսների հետ նմանությամբ»: Տես՝ Իսլամի Հանրագիտարան. Նոր հրատարակություն, Լեյդեն-Լոնդոն, 1960, հատոր 4, էջ 191: (The Encyclopedia of Islam: New edition, Leiden-London).
10. Маммадов И., Мусаев Т., Армяно-азербайджанский конфликт (история, право, посредничество), 2-е изд., Тула, 2006, стр. 28.
11. LNA, Admission of Azerbaijan to the League of Nations. Memorandum by the Secretary-General. Sec. 28, dok. 8466, dos. 8466.
12. Պետական ինքնիշխանության հայեցակարգի հիմնադիր, Ֆրանսիացի քաղաքական գործիչ Ժան Բոդենը հետևյալ կերպ է ձևակերպել այն. «Ինքնիշխանությունը պետության մշտական և բացարձակ իշխանությունն է: Բացարձակ՝ որևէ օրենքով չկապված»: Իսկ բացարձակ է այն իշխանությունը, որը տրված է ժողովրդի կողմից: Տես՝ Միրումյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., 2006, էջ 291:
13. Деникин А., Очерки русской смуты, М., 2003, стр. 235.
14. Нагорный Карабах в 1918-1923г., сборник документов и материалов, Ер., 1992, стр.574-575.
15. РГАСПИ, ф. 558. оп. 1, д. 3318, лл. 1-2. Подлинник.
16. Газета “Коммунист” (Баку), 2 декабря 1920г.
17. http://www. nkr.am.
18. РГАСПИ, ф. 17, оп. 13, д. 384, л. 67, Заверенная копия.
19. Декрет АзЦИКа об образовании Автономной Области “Из Армянской части Карабаха”. Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АССР за 1923г, Баку 1923, стр. 384-385.
20. Алекперов А., Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1990, стр.71.
21. “Советский Карабах”, 21.02.1988.
22. “Правда”, 12 января 1989.
23. “Бакинский рабочий”, 3 сентября 1991.
24. “Бакинский рабочий”, 7 ноября 1991.
25. “Свод законов СССР”, М., 1990, т. 1, стр.44-46.
26. Տես՝ «Ազգ», 14 հուլիսի 2009, նաև՝ http://www.whitehouse.gov/the_pres_office/Joint-Statement-on-the-Nagorno-Karabakh-Conflikt/
27. Լեռնային Ղարաբաղ ասելով միջնորդները «հասկանում» են նախկին ԼՂԻՄ-ը, ինչը նույնպես հակասում է հակամարտությանն առնչվող իրավական փաստերին ու փաստարկներին: Առաջին սկզբունքից մեկ այլ իրավական նշանակության փաստարկ էլ է հանդես գալիս: Հարցն այն է, որ գրավված տարածքներ կա-

րող է ունենալ միայն ագրեսորը: Այս հանգամանքը հրաշալիորեն օգտագործում է ադրբեջանական կողմը, մանավանդ այն լսարաններում, որտեղ հիմնախնդրին ծանոթ չեն կամ այդպես են անում թեկուզև ԱՀ-ի հետ կրոնական համերաշխություն դրսևորելու նպատակով (ինչպես ՄԱԿ-ում 2008թ. ընդունած բանաձևը):

28. Ամփոփիչ հայտարարություն. համանախագահներն ամբողջացնում են փաստահավաք առաքելության հավաքած տեղեկատվությունը. http://medialab.am/news/id/1723

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Իրավական փաստարկների քաղաքականացման դրսևորումները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան

Հոդվածում ցույց է տրվում, թե ինչպես բոլոր էթնոքաղաքական հակամարտություններում, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ևս քաղաքական և իրավական փաստարկները փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Քաղաքական շարժառիթները «սիրում են թաքնվել» իրավունքի հաճախ ակնհայտ թվացող սկզբունքների տարաբնույթ մեկնաբանությունների տակ՝ փակուղի տանելով հակամարտության կարգավորման գործընթացը: Դա նկատելի է նաև մեր դեպքում: Թե՛ միջնորդները, թե՛ հակամարտության կողմերը չեն խուսափում միջազգային իրավունքին կատարվող հղումներից: Տվյալ պարագայում հայկական կողմերի խնդիրը միջազգային իրավունքի՝ հակամարտության կարգավորման ներբերվող սկզբունքները կեղծ մեկնաբանություններից ազատելը դրանք իրենց իրական բովանդակությամբ ներկայացնելն ու կիրառելը պիտի լինի:

РЕЗЮМЕ

Проявления политизации правовых аргументов в процессе урегулирования Карабахского конфликта

Грайр Пашаян, Лиана Балаян

Ключевые слова: *Карабахский конфликт, международное право, правовые аргументы, право на самоопределение, Мадридские принципы, политические мотивы и характер конфликта, Минская группа ОБСЕ, международное сообщество.*

В статье показано, что, как и во всех этнополитических конфликтах, в процессе урегулирования карабахского конфликта политические и правовые аргументы несут в себе взаимную обусловленность. Политические мотивы часто “любят скрываться” под различными интерпретациями, казалось бы, очевидных принципов права, загоняя в тупик процесс урегулирования конфликта. Это имеет место и в нашем случае. И посредники, и стороны конфликта ссылаются на международное право. В данных обстоятельствах задачей армянских сторон должно быть: предупредить ложные интерпретации принципов международного права по урегулированию конфликта, добиться правильного толкования содержания данных принципов, а также их осуществления.

SUMMARY

Manifestation of Politization of the Legal Arguments in the Karabakh Conflict Settlement Process

Hrayr Pashayan, Liana Balayan

Keywords: *Karabakh conflict, international law, legal arguments, the right to self-determination, the Madrid principles, political motives and character of the conflict, the OSCE Minsk Group, the international community.*

The article shows that, like all ethno-political conflicts, the process of Nagorno- Karabakh conflict settlement is conditioned by political and legal arguments. Political motives "like to hide" under various interpretations of the principles of law, thus driving the conflict settlement process into a deadlock. It also takes place in our case. Both the mediators and the conflicting parties refer to the international law. In these circumstances, the goal of the Armenian parties should be the prevention of any false interpretation of the principles of international law on the conflict settlement, the achievement of the proper interpretation of the principles and their implementation.